

Նախագիծ

Առաջարկություն

Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի կրթության որակի բարելավման միջոցառումների վերաբերյալ

Նախաբան – Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2011-2012 ուսումնական տարում աշխատանքների հիմնական ուղղությունն է համարում ուսման որակի բարելավումը, այդ նպատակով

ա) կարևորում է այն հանգամանքը որ դասախոսները, ուսանողները և աշխատակազմը հստակ պատկերացում ունենան «ուսման որակ» հասկացության բովանդակությանը՝ ի տարբերություն «որակ» հասկացության կիրառմանը այլ ոլորտներում:

բ) որակ հասկացության առանցքում «մարդու որակն է» ընդհանրապես, նրա աշխարհահայացքի լայնացումն ու խորացումը, մարդասիրության սկզբունքների արմատավորումը

գ) ուսման որակի բարձրացման մեխանիզմը հստակ պատկերացնելու համար, որպես մեթոդաբանական սկզբունք առանձնացնում ենք նպաստող և խոչընդոտող հանգամանքները, որոնց մի մասը կրթության ոլորտի «ներսում է», մյուսը համակարգից «դուրս է»: Երկուսն էլ անհրաժեշտ է հաշվի առնել չխարխալելու համար:

h/h	Որակի բարձրացմանը նպաստող գործոնները	Որակի բարձրացմանը խոչընդոտող հանգամանքները	Նախատեսվող միջոցառումները	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ելքային արդյունքները
1	Դասախոսության պրոցեսի գրավչությունը, հրապուրիչ լինելը, մատուցվող նյութի հազեցվածությունը, դասաժամի առավելագույն արդյունավետությունը, կոնկրետ օրինակներով, համոզեցուցիչ կերպով տեսական գիտելիքների գործնական կիրառման ոլորտի շեշտադրումը:	Միապաղաղ, ձանձրալի ընթացքը դասաժամի ոչ ռացիոնալ օգտագործումը	Կիրառել դասատվության պրոցեսում համալիր մեթոդների գուգադրում՝ խմբային, կլոր սեղաններ, դերային խաղեր,, հաշվի առնելով լաբանի, ուսանողների հնարավորություններն ու ցանկությունները:	2011-2012 ուս. տարվա ընթացքում	Դեկանատ, ամբիոներ, դասախոսներ	
2	Ուսանողների մշտական մասնակցությունը դասընթացներին, հաճախելիության առավելագույն ապահովումը:	Որոշ ուսանողների պարբերաբար բասակայություններ, ձևական մոտեցումը բացակայությունների մարման գործընթացին	Դեկանատի կողմից դասաժամերին ներկայանալու հսկողության ուժեղացում, բացակայությունների մարման գործընթացի կատարելագործում, բացակայությունների պատճառների՝ ըստ ամենայնի ուսումնասիրում և կանխում: Դասացուցակ կազմելիս հաշվի առնել նորմատիվային բոլոր պահանջները, ինչպես նաև կիրառել <ճկուն> գրաֆիկի սկզբունքը	մշտադիտարկում	ռեկտորատ, դեկանատ	
3.	Իրավունքների ու պարտականությունների հավասարաչափ գուգորդում	Իրավունքների գերակայության թերագնահատում	Հանձնարարված բոլոր աշխատանքների վերահսկում, ընդունված	մշտական	դեկանատ, ամբիոններ, ուս. խորհուրդ	

			որոշումների կատարման ապահովում			
4	Կրթության գործընթացների կազմակերպմանը ծնողների ներգրավման ընդլայնում: Կրեդիտային համակարգի մի շարք սկզբունքներին ծնողների իրազեկում,	Ծնողների անտարբերությունը, կամ երեխաների նկատմամբ ազդեցության անարդյունավետությունը	Առաջին կուրս ընդունված ուսանողների ծնողների հետ հանդիպման շարունակականության ապահովում: Ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների ծնողներին համապատասխան տեղեկատվության ապահովում	Կիսամյակի ընթացքում	Դեկանատ, ամբիոններ	
5	Միջանկյալ քննությունների (գրավոր) արդյունավետության բարձրացումը, ցուցանիշների աստիճանական բարելավումը ընդհանուր արդյունքների մեջ	Միջանկյալ քննությունների դեռևս ցածր արդյունավետությունը, ծածկագրերից օգտվելու փորձերը (թերևս ձախողված)	Միջանկյալ քննությունների նկատմամբ հսկողության խստացումը, աստիճանաբար թեստերի համակարգի ներդրում, 3-րդ կուրսում «հավելվածի»- ի տարբերակի կիրառում (մանրամասն կներկայացվի բանավոր)	2011թ. նոյեմբեր-դեկտեմբեր	դեկանատ	
6	Անհատական աշխատանքների թեմաների ստեղծագործական բնույթի շեշտադրում և ցանկի մշտական թարմացում	Ստեղծագործական բնույթի բացակայությունը, այլ անձի ձեռագրով կամ պարզապես ինտերնետից արտատպված ներկայացները: (Նմանատիպ դեպքեր հայտնաբերվել և կանխվել են)	Մշտապես վերանայել և թարմացնել անհատական աշխատանքների թեմաների ցանկը: Աշխատանքներին տալ այնպիսի ձևակերպումներ, որպեսզի ուսանողը ունենա հնարավորություն ստեղծագործաբար շարադրելու: Նմանատիպ աշխատանքները	մշտական	դեկանատ	

			խրախուսել, ակադեմիական անազնվությունները կանխել			
7	Օտար լեզուների բավարար իմացություն	Անտարբեր վերաբերմունք օտար լեզուների նկատմամբ	Մագիստրատուրայի դիմորդների երաշխավորությունները նախապատրաստելիս ուշադրություն դարձնել նաև օտար լեզուներից ստացած գնահատականների վրա, ուսանողների հետ այս առումով բացատրական աշխատանքներ տանել 1-ին կուրսից սկսած	մշտական	դեկանատ	
8	Ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի արդիականությունը, առարկայի ու նրանում ամրագրված գիտելիքի՝ 'պիտանելիության' բարձր գործակիցն ու վարկանիշը	Դոգմատիկ մտածելակերպի առկայությունը, ժամանակավրեպ գիտելիքի մատուցումը	Ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի մշտական քննարկում և վերանայում ամբիոնի նիստերում, մեթոդ խորհրդում	յուրաքանչյուր կիսամյակում	ամբիոններ	
9	Ուսանողների ակտիվ ներգրավածությունը գիտահետազոտական աշխատանքներին, առարկայական օլիմպիադաներին, գիտական նստաշրջաններին, լավագույն աշխատանքների և ուսանողների խրախուսումը	Միայն դասավորության գործընթացներով սահմանափակվածությունը	Ապահովել Հանրապետության պետական բուհերի կողմից կազմակերպվող գիտական նստաշրջանների և օլիմպիադաներին ուսանողների մասնակցությունը: ՀՄՖ-ում կազմակերպել և հրավիրել մյուս բուհերի ուսանողներին:	կիսամյակի ընթացքում	դեկանատ, ուսումնական խորհուրդ	

10	<p>Անձի սոցիալական շարժունության խնդիրների լուծումը, ինքնազարգացման և ինքնադրսևորման լայն հնարավորությունների ընձեռումը</p>	<p>Նվազ ուշադրությունը կամ անտարբերությունը ինքնատիպ մտածելակերպ ունեցող և նախաձեռնող ուսանողների նկատմամբ</p>	<p>Ուշադրության կենտրոնում պահել ինքնատիպ մտածելակերպ ունեցող, նախաձեռնող, հասարական ակտիվություն ցուցաբերող ուսանողներին և նրանց խրախուսումը, սրտացավ ու հոգատար վերաբերմունք նրանց նկատմամբ: Բանավեճի ակումբի, 'ստեղծագործների ակումբի' գործունեության ակտիվացում</p>	<p>կիսամյակի ընթացքում</p>	<p>դեկամնատ, ուսումնական խորհուրդ, ՈՒԳԸ</p>	
11	<p>Կրթության և իրական կյանքի 'տարբեր հարթությունների' ընթացքի համադրում</p>	<p>Ստացած գիտելիքների և դրանք պրակտիկ կյանքում օգտագործելու անհնարիությունը, հմտությունների և կարողությունների խզումը</p>	<p>Արագ փոփոխվող աշխատաշուկայի պահանջները բավարարելու նպատակով ուսումնական և արտադրական պրակտիկաների պատշաճ կազմակերպում: Անցկացնել էքսկուրսիաներ և այցելություններ տվյալ մասնագիտական ոլորտի մեծ համարում ունեցող կազմակերպություններ, գործընթացներին մոտիկից ծանոթանալու նպատակով, գործատուների հետ մշտական կապի ապահովում, հանդիպումների կազմակերպում ինչպես</p>	<p>փետրվար-մայիս</p>	<p>դեկանատ, ամբիոներ</p>	

			<p>Ֆակուլտետում, այնպես էլ մյուս կազմակերպություններում</p>			
12	<p>Գնահատումը որպես ուսուցման խթան: Գիտելիքների ստուգման հնարավորինս կատարյալ համակարգը: Գնահատում օբյեկտիվության և արդարության սկզբունքով:</p>	<p>Ցածր գնահատումը կամ որպես պատժամիջոց, կամ որպես չվաստակած (նվիրատվություն):</p>	<p>Գիտելիքի գնահատման հարցերի կապակցությամբ աշխատանքներ տանել բոլոր դասախոսների հետ: Ուշադրություն դարձնել տարբեր գործոնների՝ անհատական աշխատանք, ակտիվություն, ամփոփիչ հարցում յուրահատկությունների, առանձնահատկությունների վրա: Բոլոր մակարդակներում գնահատումը պետք է խթանի գիտելիքի ձեռքբերմանը, չկիրառվի որպես պատժամիջոց և վանի ուսավողներին: Գնահատել օբյեկտիվորեն և արդարացի, խմբերում բարոյահոգեբանական մթնոլորտը պահպանելու համար: Պարբերաբար վերանայել գործոններին տրվող միավորների չափը և կարիքը առաջանալու դեպքում առաջարկություններ ներկայացնել ակադեմիական քաղաքականության</p>	<p>մշտական</p>	<p>դեկանատ, ամբիոներ</p>	

13	Դասախոսական անձնակազմի մասնագիտական որակների վերանայումը և գնահատումը:	Դասախոսական անձնակազմի որակական փոփոխության անտեսումը, դոգմատիկ մտածելակերպի գերակշռումը	վարչություն: Կատարելագործել դասախոսական անձնակազմի մասնագիտական որակների պարբերաբար վերանայման ու գնահատման մեխանիզմները: Այս նպատակին ծառայեցնել դասալսումները ու քննարկումները, անանուն հարցումները ուսանողների շրջանում: Ուշադրություն դարձնել, որ գործընթացը նպաստի կառուցողական հետադարձ կապի ամրապնդմանը, լինի անկողմնակալ և բացասաբար չանբաղաճաբար շանրադառնա բարոյահոգեբանական մթնոլորտի վրա, կազմակերպել փոխադարձ դասալսումներ և գնահատումներ	պարբերաբար	դեկանատ	
14	Դասախոսական անձնակազմի լիարժեք համալրումը, սերնդափոխության սահուն ապահովումը, երիտասարդ սկսնակ դասախոսների խրախուսումը, մասնագիտական վարպետության աճը:	Ոչ բոլոր առարկաների գծով դասախոսական երիտասարդ կազմի առկայությունը	Ամբիոնների և դեկանատի ուշադրության կենտրոնում պահել համալսարանի լավագույն շրջանավարտներով դասախոսական անձնակազմի համալրումը: Գիտական մեծ վաստակ ունեցող պրոֆեսորները	մշտական	դեկանատ, ամբիոններ	

			ստանձնեն գիտական ղեկավարի պարտականությունները, ներառել նաև հանրապետության գիտական հիմնարկների ճանաչված մասնագետներին: Տեղի և Հանրապետության փորձառու մասնագետների ուժերով կազմակերպել երիտասարդ, սկսնակ մասնագետների որակավորման դասընթացները:			
15	Ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման ու անցկացման գործընթացին լուրջ ուշադրությունը:	Ամփոփիչ ատեստավորման քննությունների նկատմամբ վերաբերմունքը որպես սովորական, հերթական գործընթացի:	Ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովների նախագահների ու առաջարկությունների ու դիտողությունների մանրակրկիտ ուսումնասիրում և պրակտիկ իրագործում: Հարցաշարերի, քննական տոմսերի մշտական վերանայում և փոփոխություն:	2012 հունիս	ղեկանատ	
16	Հասարակության մեջ՝ բուհական համակարգում մի շարք բարոյական կատեգորիաների՝ ազնվություն, արդարություն, պատվախնդրության վերաբերմունքի վերաարժևորում և	Հասարակության կողմից բարոյական մի շարք կատեգորիաների՝ ազնվություն, արդարության արժեզրկումը	Որքանով բարոյական արժեքները կազմում են մարդու, այդ թվում՝ ուսանողի արժեհամակարգի կարևոր մասը և հետադարձ	մշտական	ղեկանատ	

	կարևորում:		<p>ազդեցություն են ունենում գիտելիքների ձեռք բերման ուղղությամբ, ուստի օգտագործել հումանիտար ցիկլի գիտությունների (փիլիսոփայություն, մանկավարժություն, պատմություն) հնարավորությունները, բարոյագիտական կատեգորիաների վերաբերման ուղղությամբ: Բարոյական խրախուսանքի արժանացնել լավագույն ուսանողներին: Օգտագործել այս առումով ակադեմիական ազնվության հայեցակարգի հնարավորությունները:</p>			
--	------------	--	--	--	--	--

ՀՄՖ դեկան՝

Հ. Գ. Ղաջոյան

